

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վեհափառ Կաթողիկոսը կամենալով մինչև Բ. Կեդրոնական ժողովի դումարումը կանոնաւորել մեր ծխական դպրոցների գործը, պատուիրեց բոլոր առաջնորդներին կազմել ժողով թեմական դպրանոցների հոգաբարձուներից, իբրև բոլոր թեմի ժողովրդից ընտրուած անձինքներից, և ընտրել ամեն մի թեմի համար մէկ կամ աւելի թեմական տեսուչներ: Թեմական տեսուչները պիտի լինին բարձրագոյն կրթութեամբ անձինք, որոնք կարող են ընտրուել թէ հոգեւորականներից և թէ աշխարհականներից: Միջին կրթութեամբ անձինք հարկաւ կարող են ընտրուել, եթէ կունենան փորձ և կվայելեն ժողովի վստահութիւնը: Թեմական տեսուչների նիւթական ապահովութիւնը թողնում է ժողովների վրայ, որոնք կարող են ռոճիկներ սահմանել թէ ծխական դպրոցների և թէ եկեղեցիների դրամներից, չափը և քանակը թէ ռոճիկի և թէ այն դրամների, որոնք պիտի եկեղեցիների և դպրոցների վրայ բաժանել, թողնում է հոգաբարձական ժողովի տնօրէնութեան, թեմական տեսուչները ունին այն պարտք և իրաւունքները, որոնք սահմանուած են ուսուչական համագումարում: Շամախու թեմը դպրանոց չունենալու պատճառով, թեմական դպրանոցների հոգաբարձութեան վերագրելիք իրաւունքները յանձնուում են Բագուայ հայոց դպրոցների հոգաբարձական և ուսուցչական խառն ժողովին:

Ուսումնական խորհուրդ

Նոյն կոնգակը սահմանում է մինչև Բ. Կեդրոնական ժողովի դումարումը Ուսումնական խորհուրդ էլմիաճնում երեք հոգուց բաղկացած, նախագահը նշանակուում է վե-

Հափառ Կաթուղիկոսը, մէկ անգամը Էջմիածնի ճեմարանի ուսուցչական խումբն է ընտրում, երկրորդ անգամը Ներսէսեան դպրանոցի հոգաբարձական և ուսուցչական խումբն ժողովը Տփլիսի աւագ ուսուցիչների հետ միասին:

Շատ պարզ է որ այս ձևը ընդունուած է ժամանակաւորապէս մինչև որ Բ. Կեդրոնական ժողովը վերջնականապէս կորոշէ ինչպէս Ուսումնական խորհրդի ընտրութեան ձևը, նոյնպէս և նրա պարտքի ու իրաւունքի սահմանները: Ուսումնական խորհրդին առ այժմ տրուած են այն իրաւունքները ինչ որ ուսուցչական համագումարում որոշուած են: Ուսումնական խորհրդի անդամների նիւթական ապահովութիւնը կոահման է Վեհափառ Կաթուղիկոսը:

Բ.

Սոյն համարում տպած է և Վեհափառի այն կանգալը, որով փոփոխութեան է ենթարկուած վանքի մինչև այսօր պահպանուած տնտեսութեան ձևը: Պատճառը հարկաւ վանքի նիւթականի սուղ դրութիւնն է: 1907-ի յունուարի 1-ին Մայր Աթոռը ունէր 60,000 լուրջու չափ պարտք, որը պիտի լրացնի և ապա սկսի իւր 1907 թուի նոր տարուայ ծախքերի շրջանը: Սինօդական և նախահաշիւ կազմող հարց ժողովը ի նկատի ունենալով սուղ դրամական կացութիւնը Մայր Աթոռի, որոշեց այդ փոփոխութիւնները կատարելու նախագիծը կազմել և զեկուցանել Վեհափառին ի տնօրէնութիւն: Որը տեսնելով իրերի վատ դրութիւնը, հրամայեց այդ կոնգալով ի կատար ածել խորհրդի որոշումը: Վերանում են հացատունը, մառանը, փուռը, ագարակի մեծամասնութիւնը, հիւրընկալական ծախքերը և ճեմարանի տնտեսական մի մասը: Մայիսից սկսած ճեմարանը կունենայ միայն 100 հոգի որդեգիր Էջմիածնի անունով բացի այն որդեգրեցից, որոնք պահպանուում են դրօթ բարերարների հաշուով: Ուսումն կլինի ձրի բոլորի վերաբերմամբ, թոշակաւորներին կյատկացնուի

15—18,000 ռուբլի, որոնք կամ կապրեն ներսում, կամ թոշակ ստանալով՝ դրսում, իսկ մնացած բոլոր աշակերտները երթեկեկ կլինին:

Նիւթականի սղութեան գլխաւոր չարժառիթն էր հայ-թրքական ընդհարումների պատճառով թեմերի պատուարդիւնքների նուազումը, նոյն իսկ իսպառ վերացումն Մայր Աթոռի միակ յոյսը մնում է դնել իւր աեպհական կալուածների վերայ, որոնցից դժբախտաբար վերջին տարիներս դժուարութեամբ են ժողովւում վանքին հասանելիք տուրքերը:

Գ.

Վեհափառը կամենալով Դիւանի մասին եղած թեր ու դէմ խօսակցութիւններին վերջ տալ, հրամայեց կոնդակով հայրապետական տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին շաքաթը մի անգամ Սինօդականներով ժողովուել Դիւան և խորհրդով որոշումներ կայացնել Դիւան ժանող բոլոր լուրջ խնդիրների վերաբերմամբ և ներկայացնել Երան ի վերջնական տնօրէնութիւն: Վեհափառի պատուէրը ճշտութեամբ կատարւում է, բոլոր դրամական և լուրջ խնդիրները խորհրդով քննւում, և որոշումները ներկայացնւում են Վեհափառին ի տնօրէնութիւն:

Իսկ սովորական գործերը ընթացք են ստանում ինչպէս և առաջ որոշեալ կարգով:

Գ.

Որպէս զի ընթերցողներին որոշ գաղափար տուած լինինք «Այրի քահանաների կրկնամուսնութեան» խնդրի մասին, որ արծարծուեց Պօլսոյ թերթերում երկու պատրիարքների Պօլսոյ և Երուսաղէմի, ու Սոյ Կաթօղիկոսի տուած Վեհափառ Կաթօղիկոսի անուամբ՝ պատասխանների առիթով, տալիս ենք այս համարում թէ Սոյ Կաթօղիկոսի և թէ երկու պատրիարքների գրութիւնների պատճէնները Արարատի էջերում, որոնք արդէն տպուած

էին Պօլսոյ թերթերում. նաև դնում ենք և «Բիւզանդիոն» Պօլսոյ թերթի այն յօդուածները, որոնք վերաբերում են կրկնամուսնութեան խնդրին: Բիւզանդիոնի յօդուածները խելացի են և հիմնաւոր, նրանք ցոյց են տալիս որ Տաճկահայ կուսակրօն հայ բարձր հոգեւորականութիւնը ոչ միայն զանցառութեան է տուել Աղգային Սահմանադրութեան ոգին, այլ և մուսուլմանութեան տուել հայոց եկեղեցու ժողովրդական ոգին, այդ հիմունքներով հոգեւորականութիւնը բարձի թողի արած ժողովրդի ձայնը, գաւառների ցանկութիւնը, արհամարհանքի տուած մեր եկեղեցու լայն սահմանադրական ոգին, ինքնազլուխ վճիռ է կայացնում այնպիսի հարցի մասին ինչպիսին է «այլի քահանաների» կրկնամուսնութեան խնդիրը, որը մեծ մասամբ վերաբերում է ժողովրդին և ոչ իրան, քանի որ քահանան պատկանում է ժողովրդին, գործում է նրա հետ և նրա մէջ, և ոչ կուսակրօնների համար: Վեհափառի կոնգակը չեշտում է, որ պատրիարքները և Սոյ Կաթօղլիկօսը խառն ժողովներ կազմել տան և առաջնորդների՝ գաւառական ժողովների կարծիքները տան իրան, բայց նոքա այդ չեն արել, կարծելով թէ դրանով հայոց եկեղեցու հիմքը ծռած կլինեն:

Մինչև այժմ դեռ չենք ստացել Ռուսահայոց առաջնորդների պատասխանները, երբ կստանանք, կտանք տեղեկութիւն և ապա ընդհանուր տեսութիւն այդ խնդրի նկատմամբ:

Ե.

Յայտնի է հայոց եկեղեցու կալուածները վերադարձնելիս, Փոխարքայի միջոցով յետ դարձրին և մեր եկեղեցական դպրոցների կալուածները, որոնք գրաւուած էին 1898-ին: Կովկասում յետ ստացանք վերոյիշեալ շէնքերը և կալուածները, իսկ Բեսարաբիայի և Աստրախանի թեմերում նոյն կալուածքները յետ չդարձրեց ներքին գործոց նախարարը, յենուելով Բարձրագոյն հրամանի այն կէտի վրայ, որով պահանջում էր Փոխարքայից հայոց

դպրոցների համար կանոնադրութեան ծրագիր ներկայացնել ի հաստատութիւն և ապա թոյլատրել այդ ֆոխարքայի գիմուսի հիման վրայ վեհափառը ներկայացրեց դեկտեմբերի վերջին իւր ծրագիրը ծխական դպրոցների մասին՝ ի նկատի ունենալով 1874 թուի կանոնները և նրանց լայն ոգին։

2.

ԸՆԾՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՐՋՐ

Աստրախանի առաջնորդական ընտրութիւնները դեռ չվերջացան։ Նոր ընտրութիւններ նշանակուել են Տաթև և Նոր-Բայազիտ։ Ընտրութիւններ կատարելը կամաց կամաց գիտարանում են, չունենք մշակուած ծրագիր և կանոններ այդ մասին, Ա. Կեդրոնական ժողովը չկարողացաւ այս մասին տալ այն ինչ որ աւելի գործնական աւելի կենսական էր, քան այժմեայ ձեռն Տաճկահայոց սահմանադրութիւնը աւելի յաջող է դրած այդ ընտրութիւնների գործը. գաւառական խորհուրդը ընտրում է իւր առաջնորդը, Ազգային ժողովը պատրիարքը։ Եթէ մեր Բ. Կեդրոնական ժողովը գումարուեց, անշուշտ աւելի կենսական ձև պիտի տայ այս ընտրութեան քան այժմ է. Կեդրոնական ժողովը կընտրի Սինոդի անդամներին, թեմական խորհուրդը առաջնորդին, գաւառականը փոխանորդներին։ Հինգ անդամանի ընտրութիւնները անպայման լաւ են, վերջնական, և ժողովրդական յոգով արուած, բայց ի նկատի պիտի ունենանք, որ հոգևոր պաշտօնեաների գործունէութեան չափի անձկութիւնը և պաշտօնի սահմանափակ լինելը ամենեւին չեն համապատասխանում այդքան ահագին աղմուկին և դղրդոցին, հոգևոր վարիչների իրաւասութեան սահմանները այնքան նեղ են, որ ժողովուրդը կարծես ուշք էլ չէ դարձնում ընտրուողի անձնաւորութեան վրայ, համարելով նրա լինելը չլինելը մասնակի երևոյթ, միւս կողմից ի նկատի առնելով առհասարակ հայ ժողովրդի անտարբեր ոգին դէպի ոչ միայն

Հոգևոր պաշտօնեաների ընտրութիւնները, այլ նոյն իսկ կենսական ինտէրիւններ ղեկավարող աշխարհիկ պաշտօնեաներինը, օր. տանուտէրի, դատաւորի, որոնց ընտրութեան մեծ մասամբ մասնակցում են զօրով, ոյժով, դրսի ստիպմամբ, ընթերցողի համար պարզում են այն հանգամանքը, որ թէև պահանջւում է ժողովրդի կողմից և տրւում է հոգևոր բարձր իշխանութիւնից ամենալայն ընտրողական իրաւունքներ և սկզբունքներ, բայց նրանք վերոյիշեալ պատճառներով մնում են մեռած տառ, օգում կախուած, «ձայն բարբառոյ յանապատի», այդ պատճառով Յուսիկ եպիսկոպոսը չկարողացաւ 2 ամիս շարունակ Ալէքսանդրապօլի գաւառում կանոնաւոր ընտրութիւններ կատարել տալ, վերջ ի վերջոյ գործակալների ձեռքով գրած համախօսականների ստորագրութեամբ գործը վերջացրեց։ Պատահում է որ ընտրութիւնները կատարուել, վերջացել են, ընտրեալը առաջ համաձայնել է և յանկարծ մի որ և է պատճառով հրաժարւում է նոյն տեղից, ինչ անենք, նոր ընտրութիւններ կ'յաջողուեն արդեօք։

Կարծում եմ մինչև Բ. Կեդրոնական ժողովի գումարումը, միակ ելք մնում է, թեմական դպրանոցների հոգաբարձութեան լիազօրութեան սահմանները ընդլայնել, իրեն թեմի ժողովրդի կողմից ընտրւած անձինքների, այն է, ինչպէս նրանց տրուեց իրաւունք ժամանակաւորապէս ընտրելու թեմական տեսուչներ ծխական դպրանոցների համար, նոյնպէս քրօւի իրաւունք իրանց պատուիրակների հետ միասին խառն ժողովով ընտրելու թեմական առաջնորդ թեմի համար, և թեմական առաջնորդի նախագահութեամբ ընտրելու փոխանորդներ՝ նոյն թեմի յաջորդութիւնների համար։ Այլապէս մեծ դժուարութիւնների կ'հանդիպենք, ժողովուրդը վարդապետներին չի ճանաչում, Կեդրոնից ընտրեալների ցուցակ ուղարկելը մի տեսակ ճնշում է ընտրութիւնների բացարձակութեան և ազատ ոգու դէմ, առ այժմ այս կիսամիջոցը կարելի է գործադրել մինչև Բ. Կեդրոնական ժողովը կ'անոնաւորի ամեն ինչ։ Գուցէ առարկուի թէ այժմ կարելի է կազ-

մակերպել գաւառական խորհուրդներ, և նրանց տալ իրաւունք գաւառի ուսումնարանների ղեկավարութիւնը և փոխանորդների ընտրութիւնները, բայց այդ էլ կլինի մեռած մարմին. եթէ թեմական խորհրդի իրաւունքները յատկացնում ենք թեմական դպրոցի հոգաբարձութեան, էլի մի գործնական կենսունակութիւն ենք տալիս արդէն գործող մարմին կազմող մի խորհրդի, որ կապուած է դպրոցի հետ, ժողովներ է անում դպրոցի նիւթական՝ տնտեսական և վարչական խնդիրների կանոնադրման համար, նա արդէն դարձել է գործող կենսունակ մարմին որոշ ֆունկցիաներով. իսկ գաւառական խորհուրդը եթէ ստեղծուի էլ ոչ մի կօնկրէտ խնդրի հետ կապ չպիտի ունենայ, նա պիտի ընտրի փոխանորդ, եթէ հարկ չլինի, իսկ գաւառի ուսումնարանների ընդհանուր ղեկավարութեան խնդրում դժուար թէ որոշ տեղ բռնի, քանի որ այդ հսկողութիւնը հեշտութեամբ կկատարի թեմական տեսուչը քան ձրի ծառայութեան կոչուած իրանց գործով զբաղուած մարդկանց խումբ, մանաւանդ որ գաւառական խորհուրդների կատարելիք դերի մասին չունենք սահմանուած կարգեր, որպիսին կարող է յաջողութեամբ մշակել Կեդրոնական Ժողովը մի միայն. նոյնպիսի մեռեալութեան են ենթարկուած և Տաճկահայոց գաւառական խորհուրդները: Առ այժմ այսքան:

Է.

Վեհափառ Կաթողիկոսը հրամայեց կօնդակով յանուն Սինոդի փետրուարի 1-ից սկսած գործադրութեան տալ հայոց եկեղեցու ծխական կանոնադրութիւնը, որը 92 յօդուածներով ապուած է այս համարում:


Այդ կանոնադրութիւնը ապուած էր 1902-ի Արարատում և կազմուած էր 1900-ին մի յանձնաժողովի ձեռքով Սյսքան տարուայ փորձը, Փոխարքայի տուած նոր կանոնները, Վեհափառի վերջին Սահմանադրական կօնդակները, Սինոդի կողմից առաջարկուած հարցերին տուած պա-

տասխանները Ռուսահայոց առաջնորդների միջոցով դանազան ժողովներից և հաստատութիւններից առիթ տուեց նորից վերահայեցողութեան ենթարկելու 1900-ի կանոնադրութիւնը, վերափոխելու, յաւելումներ անելու և առաջի առնելու նորին Վեհափառութեան ի տնօրէնութիւն: Վեհափառը Դիւանական-Սինոդական խորհրդի կարծիքը առնելուց յետոյ հրամայեց գործադրել առանց յետաձգութեան:

Ծխական կանոնադրութեան ընդհանուր կէտերն են, Ա. որոշել ծխականների, ծխական իրաւասունների, ծխական ժողովների իրաւունքները և պարտաւորութիւնները, ըստ որում՝ ծխական համարում է 6 ամիս առնուազը մի տեղ ապրող և նոյն տեղի եկեղեցու մատեանում գրուող անձը. իրաւասու համարում են կին և մարդ որոնք լրացրել են 21 տարեկան հասակը: Բ. եկեղեցու պաշտօնեաների, այն է ջահընկալի, սարկաւազի և քահանայի ընտրութիւնը, ուսումնական և բարոյական ցէնզը և ծխերի քանակը. ըստ որում որոշուել է, իւրաքանչիւր քահանային յատկացնել 250 մատաղաբաժին տուն, երկրորդ քահանայ կարող է լինել 350 տուն ունեցող գիւղում, երրորդ քահանայ կլինի երբ երկու քահանայի յատկացուած կլինին 500 տուն և աւելի 100 տուն և չն. յաջորդաբար նոյն կարգով և հետեւողութեամբ կնշանակուեն մնացած քահանաները: Քաղաքների համար պահանջում է ճեմարանական և առնուազը թեմական ու միջնակարգ կրթութիւն. գիւղերի համար 4 դասարանի վկայական, 100 տնից պակաս գիւղերի համար երկդասեան դպրոցի աւարտման վկայական: Քննութիւնները ընծայացուները պիտի տան ճեմարանում և թեմական դպրոցներում: Ընծայացուները պիտի ընտրուին երկրորդ այնպիսի ժողովում, եթէ առաջի ժողովը չկայանայ, ուր համայնքի իրաւասունների $\frac{1}{3}$ մասը ներկայ կլինի և ներկայ իրաւասունների ձայների $\frac{2}{3}$ մասն կստանայ: Գ. եկեղեցական գոյքերի պահպանութեան, ուսումնարաններ, աղքատանոցներ և չն. բարեգործական հիմնարկութիւններ բանալու

և կառավարելու համար ընտրուում են երեցփոխ և 2—4 հոգաբարձուներ, որոնց հաստատում է առաջնորդը, եկեղեցու և բոլոր բարեգործական հիմնական թիւնների պահպանութիւնը և քահանաների տնտեսական ապահովութեան խնդիրը ամբողջութեամբ յանձնուում է համայնքին լայն սահմանադրական ոգով:

Ն. Վ. ՄԵԼԻՔ-ԹԱՆՂԵԱՆ.



ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Գր. Ե.

Երկաթուղային արհեստանոցներում գործաւորների հետ ունեցած խօսակցութիւնը, ուղիղ անկիւնում մի նոր ուղղութեամբ գործ սկսելու մտադրութիւնը, և առհասարակ վերջին շաբաթների արտասովոր դէպքերը հարկադրեցին Մէկսուէլին երկար և խոր մտածելու հովուական քարոզների, նրանց բնաւորութեան և նպատակի մասին:

— Ես արդէն երկար ժամանակ է որ քարոզում եմ, — խորհրդածում էր ինքն իրեն Մէկսուէլ, և յաջող կերպով: Ինչ հաճութեամբ լսում են և ես միշտ իմ ամբիօնի մօտ շատ ժողովուրդ եմ տեսնում, բայց ինչ օգուտ իմ քարոզից: Բարեփոխում է արդեօք իմ քարոզը ունկնդիրներին: Հարկադրում է նրանց խորհրդածել, մաքրել իրենց զգացմունքներն ու հոգին: Ուղղում է արդեօք նրանց կամքը դէպի սիրոյ ու բարի գործը, դէպի ճշմարտութեան ծառայութիւնը, թէ միմիայն գեղարուեստական